ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Գյումրի 11 մայիսի 2022թ.

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս ռեկտոր Ե. Սերոբյանի մի կողմից և մյուս կողմից՝ «Գյումրու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Քոլեջ), ի դեմս տնօրեն Մ. Մարտիրոսյանի (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ Կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի թիվ 752-Ն և 2020 թվականի հունիսի 11-ի թիվ 921-Ն որոշումներով հաստատված «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու մասին կարգով», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին՝

1. Համաձայնագրի առարկան

Սույն համաձայնագրով կարգավորվում է Քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների ուսումը Համալսարանում համապատասխան մասնագիտությամբ շարունակելու հետ կապված հարաբերությունները:

2. Կողմերի պարտավորությունները

2.1. Համալսարանը պարտավորվում է՝

2.1.1. Իրականացնել բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն Լավ և/կամ Գերազանց գնահատականներ ունեցող) Քոլեջի շրջանավարտների ուսուցումը Համալսարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.1.2. Եթե Քոլեջ ընդունված հավակնորդի ուսումնառած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարբերությունների (առարկայական տարբերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամաքանակների կամ մոդուլային

ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 և ավելի տոկոս կազմող տարբերությունը) քանակը չի գերազանցում 8-ը, ապա՝

ա. մինչև 2014 թվականը ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում,

բ. 2014 թվականից սկսված ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ բարձրագույն կրթության մասնագիտությունների գծով հեռակա ուսուցման կրթության ձևը նախատեսված չլինելու դեպքում՝ երկրորդ կուրսում՝ առկա ուսուցմամբ:

2.1.3. Համագործակցել Քոլեջի հետ՝ ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և բարելավման աշխատանքներում.

2.1.4. Անհրաժեշտության դեպքում Քոլեջին ցուցաբերել համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնություն՝ ուսանողների ուսման շարունակման գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով:

2.2. Քոլեջը պարտավորվում է՝

2.2.1. Հստակորեն պահպանել Համալսարանում ուսումը շարունակելու ենթակա շրջանավարտների ընտրության կարգը:

2.2.2. Վերանայել և Համալսարանի ուսումնական պլանների հետ հնարավորինս համապատասխանեցնել Քոլեջի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը՝ Համալսարանում շարունակվող մասնագիտությունների գծով:

2.2.3. Քոլեջի շրջանավարտների որակավորման քննությունների հանձնաժողովների աշխատանքներին մասնակից դարձնել Համալսարանի համապատասխան մասնագետներին:

3. Համաձայնագրի վաղաժամկետ լուծման կարգը

Սույն համաձայնագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման Կողմերից յուրաքանչյուրի կողմից, առնվազն մեկ ամիս առաջ, մյուս կողմին գրավոր ծանուցելու դեպքում, ինչպես նաև ֆորս-մաժորային իրավիճակներում, կամ պայմանների փոփոխման դեպքում:

4. Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և դրա գործողության ժամկետը

4.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է հինգ տարի ժամկետով, հետագայում կողմերի համաձայնությամբ երկարացնելու պայմանով՝ բացառությամբ սույն համաձայնագրի 3-րդ կետի:

4.2. Սույն համաձայնագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

4.3. Սույն համաձայնագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները և ստորագրությունները.

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	«Գյումրու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Գյումրի, Պ. Սևակի 4	Հասցե՝ ք. Գյումրի, Շիրազի 3
Հեռ.՝ (0312) 2-77-70	Հեռ.՝ (0312) 5-35-13
Հ/Հ՝ 11802024816700	Հ/Հ՝ 900218000793
«ԱՅԴԻ» բանկ ՓԲԸ Գյումրիի մասնաճյուղ	Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ՝ 05502348	ՀՎՀՀ՝ 05504575
Ռեկտոր՝ Ս. Սերոբյան	Տնօրեն՝ Մ. Մարտիրոսյան